ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԸՆԹԵՐՑՈՒՄԱՆ

Անցեալ փետրվար ամսաթերթում կարդացինք մեր քաղաքացի Ցարգոյ Մատինեանցի առ տեղւոյս Հոգևոր Դպրոցն վերաբերեալ պատուական նամակը, որը իբրև ուրախահիթ լուր հաղորդել է վերոյիշեալ Դպրոցի փոփոխութեան աղագաւ. Արդարև Ցարգոյ Պարոնը շատ յուսով է եղել փոփոխութեան վերայով, բայց այդ յոյսը ինչպէս արդ ականատես ենք, շատ վաղ՝ և յետի կատարուելու բան է, միայն չենք կարող բացասել այն փոփոխութիւնը, որը ստացել է Հ. Դը. արդարև իբրև մի ամենահարկաւոր առաջնական գործ ուսումնարանի համար ժողովեցան, խորհեցին, փոփոխութիւններ արին, (Պ. նամակագրի կարծիքին համաձայն.) միայն շրթունքներին նեղութիւն տալուց, և օդը թնդացնելուց 'ի զատ, ուրիշ ի՞նչ արին — մի տեսուչ ընտրեցին, ուրիշ ի՞նչ մի գործ յառաջադրեցին, կամ թէ մեր նորընտիր Տեսուչը ի՞նչ մի կարևոր յեղափոխութիւն արաւ Ուսուցիչների մասին, բաց 'ի տեսուչ տիտղոսից և ամսականից ...։ Դոցանից 'ի զատ ոչինչ յեղափոխութիւն չ'է արած տակաւին Պատուելի Հոգաբարձութիւնը. նոյն է, ինչ որ կայ, այդպէս մնալու է, քանի որ մեր իշխանները և հոգաբարձութիւնը անտարբեր են դէպ այդ նախնական գործը, և քանի որ իւրեանց մի կօպէկը աւելի կը համարին քան թէ Ուսումնարանի հազարները, ինչպէս յայտնի է իւրեանց օր աւուր հրաժարական տալուց, և այս մշտապէս կրկնելուց "դիցուք թէ ես չկամ"։

Միայն Պ. Մատինեանցի նոյն նամակի ծանօթութեամբ հոգաբարձութեան առաջարկութիւնը ամենակարևոր է. այդպիսի մի իրաւասութեան (որը վերաբերում է դէպ 'ի Ուսուցիչների անկանոն դասատվութեանը, և մի անհատի անձնական հիւանդութեանը, որը արդարև աշակերտներին գիտակցութիւնից զրկողութեան մի մեծ վիհ է,) բացասութիւնը, ճշմարտաւորացութիւն է։ Անտարակոյս ենք որ միտք կը դարձնէ հոգաբարձութիւնը և կը տնօրինէ այդ ամենահարկաւոր մասին։ Այդ մահաբեր վիհից մեք ևս ազատ չենք մնացած, և դէպի այդ վերաբերեալ ասելիքներս ցոյց տալու ենք մեր "Դպրոցական կեանքից" անուանուած յօդուածից, որը հաղորդելով բարեջան Խմբագրութեանդ, խնդրում ենք տեղի տաք նրան Արարատ մի որ և իցէ անկիւնում։

ՊԷՊՐՈ ՀԱՅԿԱՆԵԱՆ

1870 մարտ 15

ՅԱՂԷՌՆԴՐՈՅԼ

Հանցելուս Պարսից Օգոստ. Շահին առ Լ. Կաթողիկոսն Տ. Տ. Գէորգ Գ. շնորհուած Ա-ԷՆ-ԶՈ- Ե ԸՆԷՖԱԿԱՆ առաջին կարգի շքանշանը հանդերձ կանաչ ժապաւենիւ՝ որ Ս. Պ. բուրգոյ պարսկական նորոգ կարգեալ Դեսպանին ձեռամբ առաքուած էր 'ի Պ. բուրգ, Ռուսաց Օգոստ. Կայսեր կոչմանէ հաճութիւն տրուած լինելով զայն կրելոյ, անցեալ մարտ ամսոյ 25 ին հասաւ 'ի Ս. Էջմիածին՝ Կովկասեան փոխարքայական Կառավարութեան միջոցաւ. զոր Ս. Հայրապետը ստացաւ արժանին պատուով։

Յաջորդ օրը (մարտ. 26) մինչդեռ Մայր Աթոռոյս բոլոր Միաբանութիւնը և Պ. Աստիճանաւորները և այլք փութացած էին 'ի Վ. Հարանն առ 'ի շնորհաւորել, Նորին Վ. Հափառութիւնը՝ նոյն նշանը հանդերձ ժապաւենիւ 'ի կուրծն ունելով՝ պարագային յարմար մի քանի համառօտ խոսքեր արտասանելով, իմացոյց թէ՝ ինքն միայն 'ի կուրծն կրկրէ զայն նշան, իսկ նորա փառքն և պատիւը կը պատկանի Մայր Աթոռոյ մեզում և ընդհանութեան Ազգիս Հայոց։ Այն ապա բարեմաղթեց փասն Օգոստ. Շահին Պարսից, և օրհնեց զՕգոստ. Կայսրն ամենայն Ռուսաց։